ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՕԴԱԲԱՇԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ

Ռոբերտ Սուքիասեան

Սեբաստիա նահանգում նախացեղասպանական փուլի առաջին անկիւնաքարային դրուագներից մէկը Սահակ վարդապետ Օդաբաշեանի սպանութեան հարցն է, որը կարեւորուել է ե՛ւ ոճրագործ, ե՛ւ զոհ խմբերի կողմից: Սպանութեան հանգամանքների մանրամասնութիւնները, ժամանակի ընկալումները, իրադարձութիւններին նախորդող եւ յաջորդող դէպքերի նկարագրութիւնները ներկայացւում են եբիտթուրքական դատավարութիւնների համատեքստում ի յայտ եկած օսմանեան արխիւային նիւթերի, հայկական արխիւների[1], մամուլի[2], յուշերի[3], ինչպէս նաեւ՝ յետցեղասպանական շրջանում կատարուած հետազօտութիւնների միջոցով, ինչպիսիք են՝ Սեպուհ Ակունու[4], Կարապետ Գաբիկեանի[5], Միքայէլ Վարանդեանի[6], Թէոդիկի[7], Գէորգ Մեսրոպի[8] եւ Ռայմոնդ Գէորգեանի[9] հետազօտութիւնները:

Օդաբաշեանի սպանութիւնը եղել է երիտթուրքական դատավարութիւնների շրջանակում քննուող գործերից մէկը: Դրանց համատեքստում ձեւաւորուած հետաքննիչ յանձնախմբի նախագահ Մազհար բէյը Սեբաստիայի նահանգապետին եւ ոստիկանապետին հրահանգել է քննել Օդաբաշեանի սպանութեան դէպքը եւ պահանջել սպանութեան հանգամանքների հետ կապուած վաւերագրերն ու վկայութիւններն ուղարկել Կ. Պոլիս[10]: Պահանջուած փաստաթղթերը պաշտօնապէս վաւերացուել են եւ բնագրերի հետ նոյնական են[11]:

Սրանց բնօրինակները մինչեւ օրս պահպանւում են Թուրքիայի պետական արխիւում: Դեռեւս դատավարութիւնների շրջանում Պոլսոյ պատրիարքարանին՝ որպէս դատավարական կողմ, տրամադրուել են դատավարութեան նիւթերի վաւերացուած կրկնօրինակները, որոնք քեմալական իշխանութիւնների կողմից հաւանական ոչնչացման սպառնալիքից զերծ պահելու համար յետագայում Գրիգորիս Բալաքեանը տեղափոխել է Մանչեսթեր, ապա՝ Մարսէլ: Դրանք վերջնական հանգրուան են գտել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի արխիւում[12]: Արխիւի հատուածներն ուսումնասիրուել եւ կրկնօրինակուել են Հայոց ցեղասպանութեան առաջին եւ խոշորագոյն հետազօտողներից մէկի՝ հայր Գրիգոր Գերգերեանի կողմից[13]:

Յօդուածում քննւում է Սահակ վարդապետի սպանութեանն առնչուող՝ Սրբոց Յակոբեանց վանքի արխիւի եւ Թուրքիայի արխիւում պահպանուող փաստաթղթերի համեմատութիւնը եւ պատճէնների վաւերականութեան հարցը: Նիւթերը վերաբերում են Գաղտնի կազմակերպութեան, Ներքին գործերի նախարարութեան, դաւառային նահանգային իշխանութիւնների եւ մարզային իշխանութիւնների միջեւ կատարուած գաղտնի գրագրութիւններին, որոնք ցոյց են տալիս դրանց միջեւ եղած յարաբերութիւնները, փոխանցուող տեղեկութիւնների որակը եւ քանակը:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին մի քանի կարեւոր թեմեր առաջնորդ չունէին, եւ ժողովրդին «անգլուխ չձգելու պէտքը աւելի անհրաժեշտ դարձաւ»: Պատրիարքարանի Խառը ժողովում որոշւում է Գերմանիայից նոր ժամանած Գրիգորիս Բալաքեանին նշանակել Երզնկայի առաջնորդ[14]: Վերջինս մերժում է առաջարկը[15]: Քանի որ անհնար էր համոզել Բալաքեանին գնալ դաւառ, նոյն պաշտօնի համար առաջարկւում է Բրուսայի Առաջնորդ Տ. Սահակ ծ. վրդ. Օդաբաշեանի թեկնածութիւնը, որը պատրիարքի հետ պայմանները քննարկելուց յետոյ համաձայնում է[16]: Ծայրագոյն վարդապետ Օդաբաշեանը «դաւառական եւ անձնդիր պաշտօնեայ մըն էր»[17]: Ծնուել է 1875 թ. յունիսի 25-ին Սեբաստիայում (աշխարհական անունը՝ Քերովբէ): Նախնական կրթութիւնը ստացել է Արմաեան նախակրթարանում: 1898 թ. Արմաշի դպրեվանքում ստացել է սարկաւագութեան աստիճանը Մաղաքիա Պատրիարքից: 1901 թ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեանի կողմից ձեռնադրուել է Վարդապետ: Եղել է պատրիարքարանի անձնական քարտուղարը: Նոյն թուականին Ղալաթիայի Կեդրոնական վարժարանում եւ Բերայի Նոր դպրոցում դասաւանդել է Հայ մատենագրութիւն եւ կրօն: 1902-1905 թթ. տեղափոխուել է դաւառ, աշխատել է որպէս փոխանորդ եւ վարժարանների ընդհանուր տեսուչ: Արմաեանի վարժարանում դասաւանդել է հայոց լեզու եւ հայ մատենագրութեան պատմութիւն: Եղել է Ս. Նշան

---

1 Տե՛ս **Գ. Գալեմքեարեան**, *Սեբաստիոյ հայոց մարտիրոսագրութիւնը*, BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide Amele Tabouri: Massacre des soldats arméniens Fonds Andonian – Matériaux pour l'histoire du genocide, P. i. L/4-3, Amele Tabouri: massacre des soldats arméniens, պատճէնը հասանելի է՝ ՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 480. **Ս. Լուսարարեան**, *Մի կեանքի պատմութիւն*, պատճէն, ՀՑԹԻ, Ձեռագիր յուշագրութիւնների բաժին, գ. 127. **Հայկազուն**, *Սեբաստիայի եղեռնագործութիւնը 1915-ի ջարդերու ատեն*, ձեռագիր, ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 77:

2 Տե՛ս **Ա. Անտոնեան**, *Քանի մը յիշողութիւններ*,- «Երիտասարդ Հայաստան», Շիքակո, ԺԶ տարի, թիւ 24, յուլիս 23, 1919՝ վերատպուած «Ժողովուրդի ձայն»-ից, Լոնտօն, 12 յունիս:

3 Տե՛ս **Զաւէն արք. Եղիայեան**, *Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրէ, 1947. **H. Aram**, *The fall of the Aerie*, Boston, 1935. **Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան**, *Հայ Գողգոթան, դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեղինէն դէպի Զօր, 1914-1920*, հտ. Ա, Վիեննա, 1922:

4 Տե՛ս **Ս. Ակունի**, *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914-1918)*, Կ. Պոլիս, 1921:

5 Տե՛ս **Կ. Գաբիկեան**, *Եղեռնապատում. Փոքրն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, 1924:

6 Տե՛ս **Մ. Վարանդեան**, *Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը)*, Պոսթըն, 1931:

7 Տե՛ս **Թէոդիկ**, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին*, Նիւ Եորք, 1985:

8 Տե՛ս **Ց. Սարգիսեան**, *Հայկաշէն տարեգիրք արուեստներու, գրականութեանց եւ գիտութեանց*, Ա տարի. **Գէորգ Մեսրոպ**, *Թրքահայերն ու թուրքերը (1914-1918) անտիպ ու պաշտօնական փաստաթուղթեր*, խմբ. Սարգիսեան Ց., Հայկաշէն տարեգիրք արուեստներու գրականութեանց եւ գիտութեանց, Ա տարի, Կ.Պոլիս, հրատարակութիւն «Կիլիկիա» գրավաճառանոցի, 1922:

9 **R. Kévorkian**, *The Armenian Genocide. A Complete history*, London, New York, 2011:

10 Տե՛ս **K. Guerguerian**, "*41 Courts Martial - Telegrams*" (2018). Adana Confiscation (Courts Martial). 38. https://commons.clarku.edu/adana_court _martial/3, էջ 140:

11 Տե՛ս նոյն տեղում, էջ 178:

12 Տե՛ս **R. Kévorkian**, նշ. աշխ., էջ 5:

13 Քլարկ համալսարանի Հոլոքոստի ու ցեղասպանութեան ուսումնասիրութեան Սթրասլեր կենտրոնի «Գալուստեան/Մուգար» հայագիտական հետազօտութիւնների ամբոնի պրոֆէսոր Թաներ Աքչամի կողմից նախաձեռնած ծրագրի շրջանակներում այդ փաստաթղթերը թուայնացուել են. տե՛ս https://commons.clarku.edu/guerguerian-archive/:

14 Տե՛ս **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 80:

15 Տե՛ս **Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան**, *Հայ Գողգոթան*, էջ 47-50:

16 Տե՛ս **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 81-82:

17 **Մաղաքիա Օրմանեան**, *Խոհք եւ խօսք: Իր կեանքին վերջին շրջանին մէջ (Յետմահու հրատարակութիւն)*, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1929, էջ 449:

© National Library of Armenia

վանքի հոգեւորական[18]: Կարապետ Գաբիկեանի հետ պիտակել եւ դասաւորել է Ս. Նշան վանքի մատեանները՝ դրանք փրկելով փչացումից[19]: 1905-1908 թթ. եղել է Ամասիա-Մարզուանի տեղապահ, 1908-1911 թթ.՝ Ճանիկի առաջնորդ, 1912-1914 թթ. վերջերին՝ Բրուսայի առաջնորդ[20]: Բրուսայի նահանգապետի կողմից ներքին գործերի նախարարութեան առաջ ամբաստանուել է որպէս մեծ յեղափոխական[21]:

Օղաբաշեանը պատրիարքական կոնդակով եւ կառավարութեան հրամանագրով հաստատւում է Երզնկայի առաջնորդի պաշտօնում եւ Գնել Գալեմքեարեանի (ստանձնել էր Սեբաստիայի առաջնորդութիւնը) հետ մեկնում Սեբաստիա՝ այնուհետեւ Երզնկա անցնելու համար[22]: Պատրիարքարանը Ներքին գործերի նախարարութեանը տեղեկացնում է նշանակման մասին եւ տեղի իշխանութիւնների աջակցութիւնը խնդրում[23], ինչից յետոյ ներքին գործերի նախարարութիւնը տեղեկացնում է դրա մասին Էրզրում[24]:

Ներքին գործերի նախարար Թալէաթը 1914 թ. դեկտեմբերի 21-ին հեռագիր է ուղարկում Սեբաստիա, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս եւ Վան՝ տեղեկացնելով նշանակման մասին եւ յայտնում, որ վարդապետը յայտնի է քաղաքական գործունէութեամբ ու կասկածելի պահուածքով: Նա հրահանգում է տեղեկացնել ժամանման մասին ու հետեւել նրան, ապա որեւէ պատճառաբանութեամբ հետ ուղարկել[25]: Սրան ի պատասխան դեկտեմբերի 22/23-ին Էրզրումի նահանգապետ Թահսին բէյը հեռագիր է ուղարկում Ներքին գործերի նախարարութիւն՝ յայտնելով, որ ինքը ճանաչում է այդ հոգեւորականին, որ նա հայ դաւաճան է եւ պնդում, որ նա մուտք չգործի արեւելեան նահանգներ: Ըստ Թահսին բէյի՝ Օղաբաշեանը պէտք է անմիջապէս հետ ուղարկուէր, եւ այդ նպատակով պէտք է հրահանգումներ տրուէին նահանգներին[26]: Դեկտեմբերի 22-ին Սեբաստիայի նահանգապետ Մուամմերը պատասխանում է Թալէաթին՝ տեղեկացնելով վարդապետի հասնելու մասին եւ խնդրում յետագայ ցուցումներ[27]:

Ներքին գործերի նախարար Թալէաթի՝ 1914 թ. դեկտեմբերի 21-ի եւ Մուամմերի՝ դեկտեմբերի 22-ի հեռագրերի օրինակները հանդիպում են թէ՛ Թուրքիայի պետական արխիւում, թէ՛ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց արխիւում: Ուսումնասիրութեան արդիւնքում գալիս ենք այն եզրահանգման, որ փաստաթղթերը նոյնական են, եւ առնուազն այս երկու փաստաթղթերի օրինակով ապացուցւում է Երուսաղէմի արխիւում պահուող օրինակների նոյնութիւնը օսմանեան արխիւներում պահպանուող երիտթուրքական դատավարութիւնների նիւթերի հետ:

---

18 Տե՛ս **Պատրիկ Ն. Առաքել**, *Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի Հայութեան*, հտ. Ա, Պէյրութ, 1974, էջ 491:

19 Տե՛ս «Հողդար», Ա տարի, թիւ 9, յունվ. 1, 1910:

20 Տե՛ս **Թէոդիկ**, նշ. աշխ., էջ 177:

21 Տե՛ս **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ, էջ 46:

22 Տե՛ս **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 82:

23 Տե՛ս DH.EUM 2 ŞB 3-5, Հայոց Պատրիարքարանից Ներքին գործերի նախարարութեանը, նոյ. 28, 1914:

24 Տե՛ս DH.EUM 2 ŞB 3-5, Ներքին գործերի նախարարութիւնից Էրզրումի նահանգին, նոյ. 30, 1914:

25 Տե՛ս DH.ŞFR 48-91, Թալէաթից Սեբաստիա, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս եւ Վան նահանգներին, դեկ. 21, 1914: **K. Guerguerian**, "Sivas 02" (2018). Sivas. 2. https://commons.clarku.edu /sivas/2: **R. Kévorkian**, նշ. աշխ., էջ 431-432:

26 Տե՛ս DH.ŞFR 454-145, Թահսինից (Էրզրումից) Ներքին գործերի նախարարութեանը, դեկ. 22/23, 1914, պատասխան դեկտեմբերի 21-ի հեռագրին:

27 Տե՛ս DH.ŞFR 454-147, Մուամմերից (Սեբաստիայից) Ներքին գործերի նախարարութեանը, դեկ. 22, 1914:, **K. Guerguerian**, "Sivas 02" (2018). Sivas. 2. https://commons.clarku.edu/ sivas/2, հայերէն թարգմանութիւնը տե՛ս **K. Guerguerian**, "41 Courts Martial - Telegrams" (2018). Adana Confiscation (Courts Martial), 38. https://commons.clarku.edu/adana_court_martial/38, էջ 144:

Վարդապետի հանրային կերպարի, պատրիարքարանի եւ ազգային գործիչների հետ մտերմիկ յարաբերութիւնների ու գործակցութեան համատեքստում այս նամակագրութիւնների բովանդակութիւնը յուշում է, որ թուրքական իշխանութիւնների կողմից Օղաբաշեանի ներկայութիւնը կայսրութեան՝ Ռուսաստանին սահմանակից արեւելեան նահանգներում ընկալւում էր որպէս սպառնալիք: Ըստ Թէոդիկի՝ իթթիհադի համոզմունքը այն էր, որ Պատրիարքարանը «առաջնորդի» դիմակի տակ կրօնաւորներ էր ուղարկում «հայութեանը յեղափոխելու» համար[28]: Իշխանութիւնների այս համոզմունքի մասին է խօսում է նաեւ Զաւէն պատրիարքը[29]: Սեբաստիայի տղամարդկանց զանգուածային բանտարկութիւնը հիմնաւորելու համար ստեղծուել էր 30,000-անոց հայկական ապստամբութեան մասին զրպարտութիւնը[30], եւ, ըստ Գաբիկեանի, շրջանառւում էր նաեւ Սահակ վարդապետի անունը[31]:

Ըստ հայկական աղբիւրների՝ նորանշանակ հոգեւորականները Պոլսից դէպի Սեբաստիա տանող ճանապարհին լրտեսւում են[32]: Սեբաստիա հասնելուց յետոյ Օղաբաշեանը, խախտելով ընդունուած կարգաշեանը, չի տեսակցում կուսակալ Մուամմերին՝ վերջինիս պաշտօնագրերը ներկայացնելու համար[33], ինչպէս նաեւ, առանց առաջնորդարան այցելելու[34], ուղեւորւում է իր ծնողների տուն, ուր ընդունում է բազմաթիւ բարեկամների եւ համակիրների[35]: Այստեղ նոյնպէս վարդապետին շարունակում են լրտեսել[36]: Սեբաստիայից Երզնկա ուղեւորութեան համար Մուամմերը վարդապետին առաջարկում է նշանակել ուղեկցող պահակ[37] կամ ոստիկան-զինուոր[38], ինչը Օղաբաշեանը մերժում է: Մեկնումից առաջ Օղաբաշեանը հեռագիր է ուղարկում Գարահիսարի առաջնորդ Վաղինակ վարդապետ Թորիկեանին, որպէսզի վերջինս ճանապարհին՝ Էնդիրէսի մօտ, միայնայ իրեն: Ըստ Կարապետ Գաբիկեանի՝ հանդիպման պատճառը Բուրսայում Էնդիրէսի եւ Բուրգի հացագործ պանդուխտների վաստակած գումարները Վաղինակ վարդապետի միջոցով պանդուխտների ընտանիքներին յանձնելն էր, ինչը կը խնայէր Օղաբաշեանի ժամանակը[39]:

Մուամմերը վարդապետի սպանութիւնը կազմակերպելու համար ձեւաւորում է յանցախումբ, որի կազմի մէջ էին մտնում Էմիր բեկի որդի Համիդը, Նուրիի որդի (Զառացի) Մահիրը[40], չեթեբաշի Էմին Քեհեա-Զադէ Խալիսը, Մուամմերի թիկնապահ Ջելալը (Բաջանաղ օղլու)[41], Քիւթուկ օղլու Հիւսէյնը եւ Զառացի Իւզբաշ օղլու Ալին[42]: Յանցախմբի կենտրոնական անդամներից Զառացի Մահիրը, ով 15 տարի դատապարտուած էր, Մուամմերի հրամանով հանուել էր բանտից վարդապետի սպանութեանը մասնակցելու նպատակով[43]: Էմիր բեկի որդի չեթէապետ Համիդն ունէր հայկական, թուրքական եւ չերքեզական արմատներ[44]: Եղել է Էրզրումի

---

28 **Թէոդիկ**, նշ. աշխ, էջ 179:

29 **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 83:

30 **Հ. Ղազարեան**, *Յեղասպան թուրքը*, Պէյրութ, 1968, էջ 95:

31 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ. , էջ 47:

32 Նոյն տեղում, էջ 45. **Թէոդիկ**, նշ. աշխ. , էջ 178:

33 **Կ. Գաբիկեան**, նշ. Աշխ. , էջ 45. **Ս. Ակունի**, նշ. աշխ. , էջ 76:

34 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ. , էջ 46:

35 Նոյն տեղում:

36 Նոյն տեղում:

37 **Ս. Ակունի**, նշ. աշխ. , էջ 76:

38 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ. , էջ 46:

39 Նոյն տեղում:

40 Տե՛ս **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ. , էջ 47. **Թէոդիկ**, նշ. աշխ. , էջ 178. **Ս. Ակունի**, նշ. աշխ. , էջ 76:

41 Տե՛ս **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 82:

42 Տե՛ս **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ. , էջ 47. **Թէոդիկ**, նշ. աշխ. , էջ 178. **Ս. Ակունի**, նշ. աշխ. , էջ 76:

43 Տե՛ս **Հայկազուն**, նշ. աշխ. , էջ 10-11. **Գէորգ Մեսրոպ**, նշ. աշխ. , էջ 121:

44 Նոյն տեղում, էջ 142. **Սեպուհ Ակունի**, նշ. աշխ. , էջ 94:

© National Library of Armenia

նահանգի Երզնկա գաւառակի Կամարիկ գիւղի գիւղապետ[45], Սեբաստիայի նահանգի կուսակալի թիկնապահ[46]: Ըստ 1915 թ. տուեալների՝ դեռեւս գտնուել է Սեբաստիայում կամ Ուզուն Եայլայում՝ չերքեզների մօտ[47]: Կովկասից ժամանած Խալիս բեկը («չէթէ ըէիսի»[48] «Թէշքիլաթ Մահսուսէի» միւդիր, Իթթիհատի «ըէիս»[49]) ցեղասպանութիւնից յետոյ գտնուել է Սեբաստիայում[50]: Ըստ Գաբիկեանի՝ Խալիս բեկը Թոնուս-Շար-Գըշլայի ճանապարհով անցնող Սամսոնի, Ամասիայի, Մարզուանի, Թոգաթի քարաւանների կողոպտիչ էր, տղամարդկանց ջարդարար, աղջիկ-հարսների զանգուածային վաճառող[51]: Յանցախմբի մէկ այլ անդամ Քիւթուկի Մեհմեդի որդի Հիւսէյնը (չեթէ)[52] սերտ յարաբերութիւններ է ունեցել հայերի հետ, տիրապետել է հայոց լեզուին[53]: Հիւսէյնի հայրը Մուամմերին պարտք է եղել 200 ոսկի, որի մարման դիմաց առաջարկել է որդուն դարձնել չեթէ[54]: Հիւսէյնը ունեցել է քաղաքական հակումներ եւ եղել է սուլթան Աբդուլ Համիդին քննադատող իթթիհադականներից[55]: Վարդապետ Օդաբաշեանի սպանութիւնից յետոյ Հիւսէյնի մասին յիշատակւում է Ալիսի հովտի գիւղերի ջարդարարութեան ժամանակ[56]: Յատկանշական է, որ նա մասնակից է եղել նաեւ վարդապետի սպանութեանը անմիջապէս

45 **K. Guerguerian**, "Military 08" (2018). Military Tribunals / Muhtelif Konular. 8. https://commons.clarku.edu/military/8.

46 Տե՛ս Հայկազուն, նշ. աշխ., էջ 10-11:

47 Նոյն տեղում:

48 Ըէիսի պետ:

49 Տե՛ս **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 592:

50 Տե՛ս Հայկազուն, նշ. աշխ., էջ 10-11:

51 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 142:

52 Տե՛ս Հայկազուն, նշ. աշխ., էջ 11. **Ս. Ակունի**, նշ. աշխ., էջ 94:

53 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 160:

54 Նոյն տեղում:

55 Նոյն տեղում:

56 Նոյն տեղում:

յաջորդած թուրք զինուորների թունաւորման դէպքին, որը, հասարակական լարումներ հրահրելու նպատակով կազմակերպուած սադրանք էր[57]: 1919 թ. ամռանը յայտարարուել է Հիւսէյնի սպանութեան մասին[58]: Արնոլդ Թոյնբիի հրապարակած փաստաթղթերի մէջ հանդիպում ենք Մուրադի՝ Ա. Սաֆրաստեանին տուած հարցազրոյցը, որտեղ նա նշում է յանցախմբի անդամ եւս մէկ անձի անուն՝ Զերքեզ Քեօռ Քասիմ[59]:

Ինչպէս տեսնում ենք, վարդապետի սպանութեանը մասնակցած խմբի անդամները նախկինում աչքի են ընկել յանցաւոր գործունէութեամբ եւ յատկանշական է, որ նրանցից որոշները անմիջական առնչութիւն են ունեցել նահանգապետի հետ: Խմբի որոշ անդամներ յետագայում շարունակել են իրենց յանցաւոր գործունէութիւնը նաեւ բուն ցեղասպանական գործողութիւնների ընթացքում՝ տեղահանութիւնների փուլում: Նրանք, ստանալով «Ապահովագրական յանձնախումբ» անուանումը, իրականացրել են տեղահանուածների թալան եւ սպանութիւններ Սեբաստիա եւ Խարբերդ նահանգների սահմանագլխին տեղակայուած Քեօթու-Խան անցումային կայանում[60]:

Սեբաստիա-Երզնկա ճանապարհին Օդաբաշեանը Հաֆիզ գաւառակի Թոդորակ գիւղում իջեւանել է «Հնչակեան հերոս»[61] Դարբինեան Բարսեղի ագարակում, իսկ Զառայում Արաբեանների բնակարա-

57 Տե՛ս **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 592. **R. Kévorkian**, նշ. աշխ., էջ 431-432:

58 Տե՛ս **Ս. Լուսարարեան**, նշ. աշխ., էջ 162. **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 592:

59 Տե՛ս **Viscount Bryce**, *The treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, 1916, p. 344:

60 **Ռ. Սուքիասեան**, *Քեօթու Խան. Սեբաստիայի տեղահանութեան ճանապարհի մի կայանի շուրջ*,- «Ցեղասպանագիտական հանդէս», 6 (1), Երեւան, 2018, էջ 44-61:

61 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 47:

նում[62]: Այս ընտանիքները յետագայում ենթարկուել են բռնութիւնների (Արաբեան Աւետիսը բանտում սպանուել է[63]): Զառայում վարդապետը փորձել է կառք վարձել եւ այդ ծառայութիւնը մատուցելու համար ներկայացել է Խենթ Տիգրան անունով մի կառապան: Սակայն յանցախմբի անդամ Հիւսէյնը, լինելով վերջինիս ընկերը, հետ է պահել Տիգրանին այդ ճանապարհորդութիւնից՝ նրան կանխամտածուած սպանութիւնից փրկելու համար: Տիգրանի փոխարէն վարդապետի կառքը վարելու էր զառացի Առաքել Ասլանեանը[64]:

Այսպիսով, 1915 թ. յունուարի 1-ին վարդապետ Օդաբաշեանը Թոդորակից ուղեւորւում է Երզնկա: Ճանապարհը, որով անցնելու էր վարդապետի կառքը, նախապէս վերցւում է ժանդարմների հսկողութեան տակ, իսկ երթեւեկութիւնը սահմանափակւում է[65]: Զաբալը եւ Գանլը Թաշ գիւղերի միջեւ[66] գտնուող Աղուանիս գիւղի մօտ տեղակայուած «Զոպան Թէքքէսի»[67] կոչուող վայրում նրա կառքի վրայ է յարձակւում դարանակալ յանցախումբը եւ սպանում վարդապետին[68][69] ու նրա կառապանին[70]: Վեց ձիաւորից բաղկացած խումբը սպանութիւնն իրականացնում է մաուզերներից ու մարթինիներից արձակուած զինատեսակներով: Սպանութիւնից յետոյ եւս որոշ ժամանակ ճանապարհային երթեւեկութիւնը մնում է վերահսկողութեան տակ[71]: Մարդասպանների «ուշադրութեանն է արժանացել» միայն վարդապետի ծոցագրպանի յուշատետրը[72]: Նոյնիսկ օսմանեան բարձրաստիճան պաշտօնեաների նամակագրութեանն ու վարդապետի հանդէպ նրանց ունեցած յատուկ վերաբերմունքին անծանօթ լինելով՝ սպանութեան այս հանգամանքից եւս կարելի է ենթադրել, որ մարդասպանների նպատակը աւելին էր, քան զուտ աւազակութիւնը[73]: Վարդապետի մարմինը ամբողջ գիշեր մնում է կառքի մէջ, եւ միայն յաջորդ օրն է սպանութեան լուրը հասնում մերձակայ Աղուանիս գիւղ: Շապին Գարահիսարի Առաջնորդական տեղապահ Վաղինակ վրդ. Թորիկեանը, ում հետ Օդաբաշեանը հանդիպելու պայմանաւորուածութիւն ունէր, անմիջապէս գնում է ոճիրի վայրը եւ մօտակայ Ածպտերի վանքում կազմակերպում է վարդապետի թաղումը[74]: Սպանութիւնից երկու օր անց՝ յունուարի 3-ին, Մուամմերը Թալէաթին ուղղուած հեռագրում հաղորդում է Օդաբաշեանի եւ կառապանի սպանութեան մասին՝ տեղեկացնելով, որ սպանութիւնն իրականացուել է անյայտ մարդկանց կողմից, եւ ինքը դէպքը հետաքննելու ու ոճրագործներին ձերբակալելու հրաման է արձակել[75]: Դէպքի հետաքննութեան մանրամասները եւ ոճրագործների ու Մուամմերի միջեւ եղած կապերը հանգամանօրէն ուսումնասիրուած են Գրիգոր Գերգերեանի անտիպ աշխատութեան մէջ[76]:

62 **Թէոդիկ**, նշ. աշխ., էջ 178:

63 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 47:

64 Նոյն տեղում:

65 **Գ. Գալեմքեարեան**, նշ. աշխ., էջ 4. **Պատրիկ Առաքել**, նշ. աշխ., էջ 6. **Գէորգ Մեսրոպ**, նշ. աշխ., էջ 120:

66 **Գ. Գալեմքեարեան**, նշ. աշխ., էջ 3. **Պատրիկ Առաքել**, նշ. աշխ., էջ 5:

67 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 47:

68 **Թէոդիկ**, նշ. աշխ., էջ 178:

69 **Ս. Ակունի**, նշ. աշխ., էջ 76:

70 **Կ. Գաբիկեան**, նշ. աշխ., էջ 47:

71 **Թէոդիկ**, նշ. աշխ., էջ 179:

72 **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 82. **Գէորգ Մեսրոպ**, նշ. աշխ., էջ 119:

73 Նոյն տեղում:

74 **Զաւէն արք. Եղիայեան**, նշ. աշխ, էջ 82. **Թէոդիկ**, նշ. աշխ., էջ 179:

75 DH. EUM 2. ŞB 3-50, Մուամմերից (Սեբաստիայից) Ներքին գործերի նախարարութեանը, յունվ. 3, 1915:

76 **K. Guerguerian**, "41 Courts Martial - Telegrams" (2018). Adana Confiscation (Courts Martial). 38. https://commons.clarku.edu/adana_court_martial/38:

© National Library of Armenia

Քանի որ սպանուածը Սեբաստիայում վայելում էր մեծ հեղինակութիւն, դէպքի մասին լուրի տարածումը յղի էր հանրային ցնցումներ առաջացնելու վտանգով: Նման զարգացումը կանխելու համար Մուամմերը ձեռնարկում է համապատասխան քայլեր՝ անմիջապէս արգելելով մամուլում դէպքի վերաբերեալ յիշատակումը[77]: Սակայն լուրը կայծակնային արագութեամբ տարածւում է բնակչութեան շրջանում[78]: Պարտադրուած գաղտնիութեան նման պայմաններում է, որ միայն օրեր անց, առանց անուանական յիշատակման[79], գաղտնի կազմակերպւում է վարդապետ Օդաբաշեանի հոգեհանդիստը[80]: Սպանուածի մօտից յայտնաբերուած դրամն ու գոյքը յանձնւում են վարդապետի մօրը՝ Տիրամայր Օդաբաշեանին[81]:

Ըստ Միքայէլ Վարանդեանի՝ Սահակ վարդապետը Սեբաստացի Մուրադի ամենամօտ մարդկանցից էր[82]: Մուրադի հետ հանդիպման ժամանակ Մուամմերը տեղեկացնում է, որ ժամանակի հանգամանքները հաշուի առնելով՝ գաղտնի կերպով կը զբաղուի դէպքի բացայայտմամբ, ինչին Մուրադը պատասխանում է, որ եթէ ոճիրը կանխամտածուած չէ, դժուար չի լինի գտնել պատասխանատուներին[83]:

Այս հանդիպումից յետոյ Մուրադը սկսում է զգուշանալ Մուամմերից. սա լինում է նրանց վերջին հանդիպումը[84]: Արամ Հայկազի հաղորդած տեղեկութիւններով, երբ Սահակ վարդապետի սպանութեան մասին տեղեկութիւնները Շապին Գարահիսար են հասնում, կասկածից վեր է դառնում, որ մօտ ապագայում սպասւում էին բախումներ: Վաղինակ վարդապետը հրաւիրում է Դաշնակցութեան եւ Վերակազմեալ հնչակեանների մասնակցութեամբ ժողով: Առանց երկար բանավէճերի, ժողովը գալիս է այն եզրահանգման, որ բախումները անխուսափելի են, եւ դրանց պէտք է անմիջապէս նախապատրաստուել[85]:

Ինչպէս կարել է տեսնել, Օդաբաշեանի՝ «առաջին նահատակի»[86] սպանութիւնը ազդակ էր Սեբաստիայի հայութեան կրօնական եւ քաղաքական շրջանակների համախմբման համար:

Թորիկեանը եղելութեան մասին հեռագիր է ուղարկում ազգային առաջնորդարան, որն էլ իր հերթին տեղեկութիւնը փոխանցում է պատրիարքարանին[87]: Զաւէն պատրիարքն իր յուշերում արձանագրում է այս տեղեկագրի՝ դրաքննութիւնից վրիպելու տարօրինակ փաստը[88]: Այս «առեղծուածը» յետագայում բացայայտւում է Արամ Անտոնեանի խոստովանութեամբ: Անտոնեանը այս ժամանակահատուածում աշխատում էր օսմանեան զինուորական դրաքննութիւնում, եւ նրա ձեռքն էին անցել Սղերդի ջարդի ու Սահակ Վարդապետի սպանութեան մասին տեղեկութիւնները, որոնց բովանդակութիւնը նա հաղորդում է պատրիարքարանին[89]: Պատրիարքը բողոքագիր-թագրիր է ուղղում կառավարութեանը գործը բացայայտելու համար, սակայն այն մնում է անպատասխան[90]: Սեբաստիայում նոյնպէս հոգեւոր առաջնորդները ձեռնարկում են սպանութեան բացայայտմանն ուղղուած քայլեր: Գնէլ

77 Կ. Գաբիկեան, նշ. աշխ., էջ 48:
78 Նոյն տեղում:
79 Կ. Գաբիկեան, նշ. աշխ., էջ 48:
80 Նոյն տեղում. Թէոդիկ, նշ. աշխ., էջ 179. Ս. Ակունի, նշ. աշխ., էջ 76. Ս. Լուսարարեան, նշ. աշխ., էջ 143:
81 Թէոդիկ, նշ. աշխ., էջ 179:
82 Մ. Վարանդեան, *Մուրատ (Սեբաստացի ոգմիկիմ կեանքն ու գործը)*, 1931, էջ 211:
83 Նոյն տեղում, էջ 211:
84 Նոյն տեղում:

85 **Aram Haigaz**, *The fall of the Aerie*, Boston, 1935, p. 35.
86 Զաւէն արք. Եղիայեան, նշ. աշխ., էջ 82:
87 Կարապետ Գաբիկեան, նշ. աշխ., էջ 48:
88 Զաւէն արք. Եղիայեան, նշ. աշխ, էջ 82:
89 Ա. Անտոնեան, նշ. աշխ.:
90 Զաւէն արք. Եղիայեան, նշ. աշխ, էջ 82:

Գալեմքեարեանը, տեղեկանալով սպանութեան մասին, իսկոյն դիմում է Մուամմերին՝ պահանջելով մանրազնին քննութիւն եւ ոճրագործների պատիժ: Մուամմերը պատասխանում է, որ տրուած են համապատասխան ցուցումներ: Իր ունեցած տեղեկութիւնները Գալեմքեարեանը հաղորդում է Պատրիարքարանին եւ իմանում, որ Պատրիարքարանը այդ հարցով արդէն դիմել է Բ. Դռանը[91]: Պատրիարքարանը երկրորդ անգամ է բողոք ուղարկում, որը նոյնպէս մնում է անպատասխան[92]:

Եզրակացութիւն

Այսպիսով, Սահակ վարդապետ Օդաբաշեանի սպանութիւնը նախացեղասպանական փուլում Սեբաստիայի առաջին քաղաքական սպանութիւններից էր, որի կազմակերպման եւ քողարկման մէջ ներգրաւուած են եղել բարձրաստիճան պաշտօնեաներ, այդ թւում՝ Ներքին գործերի նախարարը, Սեբաստիայի նահանգապետը եւ այլք: Թուրք բարձրաստիճան պաշտօնեաների կողմից վարդապետը ընկալւում էր որպէս սպառնալիք՝ հաշուի առնելով նրա ներգրաւուածութիւնը ազգային կառոյցների գործերում եւ պատերազմի ընթացքում նրա նշանակումը Արեւմտեան Հայաստանում:

Սահակ Օդաբաշեանի սպանութեան պատմութեան վերականգնման այս փորձը ցոյց է տալիս հայկական եւ օսմանեան աղբիւրների համադրման կարեւորութիւնը պատկերի ամբողջականացման համար: Մինչ օսմանեան աղբիւրները կարեւորագոյն դեր ունեն կայսերական որոշումների կայացման եւ դրանց կիրարկման գործընթացները հասկանալու համար, հայկական աղբիւրները համարժէք կարեւորութիւն ունեն տեղում կատարուող իրադարձութիւնների նկարագրման համար: Օդաբաշեանի սպանութեանը նախորդող օսմանեան բարձրաստիճան պաշտօնեաների գրագրութեան օրինակները պահւում են Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց եւ Թուրքիայի պետական արխիւներում: Այս յօդուածում Սահակ Օդաբաշեանի սպանութեանն առնչուող նիւթերի քննութիւնը, որի ընթացքում համեմատուել են վերը նշուած երկու արխիւներում պահպանուող փաստաթղթերը, առնուազն այս դէպքի մասով վկայում են դրանց նոյնութիւնը:

91 Գ. Գալեմքեարեան, նշ. աշխ., էջ 3. Պատրիկ Առաքել, նշ. աշխ., էջ 5:
92 Զաւէն արք. Եղիայեան, նշ. աշխ, էջ 82:

© National Library of Armenia